Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի շնորհավորանքը Սեպտեմբերի 21-ի՝ Հայաստանի Հանրապետության անկախության օրվա առթիվ

Սիրելի հայրենակիցներ,
Սեպտեմբերի 21-ը մեր ժողովրդի նորագույն պատմության ամենապատվավոր էջերից մեկն է. այն օրն է, երբ հաստատվեց Հայաստանի անկախ պետականությունը և մեր դարավոր ազատատենչ կամքը վերածվեց իրականության:
Այս օրը խորհրդանշում է ազգային միասնությունը, արժանապատվությունը և մեր պետության նկատմամբ պատասխանատվությունը: Անկախությունը ոչ միայն պատմական նվաճում է, այլև՝ մշտապես պահպանվող ու պաշտպանվող արժեք, որն ամեն մեկս կոչված ենք ամրապնդելու մեր աշխատանքով, հավատով և միասնականությամբ:
Թո՛ղ սեպտեմբերի 21-ը դառնա նոր առիթ վերագնահատելու մեր անցած ուղին, ոգևորվելու հաջողություններով և համախմբվելու՝ դիմագրավելու ժամանակի մարտահրավերները:
Շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի Հանրապետության անկախության օրվա առթիվ՝ մաղթելով խաղաղություն, անվտանգություն և բարօրություն մեր հայրենիքին ու ժողովրդին:
Փա՛ռք ազատ և անկախ Հայաստանին: